

ԿԸՆՄԱԿ = Կոչի

## Թ. Ա. Մ Ա Ր

(I. Երմանովի)

Դարեալի խորունկ, միզապատ կիրճում,  
Ուր թերէք գետն է յուզում, մըռնչում,  
Կանգնած մի մըռայլ դրդեակ հընօրեայ,  
Սեւին էր տալիս սեւ ժայռի վրայ:

Եւ նա անբընակ, բարձրաշէն ու նեղ—  
Թամար բագրին ապրում էր այնին.  
Գեղեցիկ, որպէս հրեսակ երկնային,  
Նենգամի՞ս ու չա՛ր, որպէս չար ոզին.

Եւ կէս զիւերուայ մըռուչի միջից  
Ասկեռող լոյս էր ցոլում դրդեակից.  
Անցորդի ուշին էր նա հրապուրում,  
Եւ նինջ, եւ հանգիս նորան խոստանում:

Եւ մեղմ լրաւում էր մի ձայն տենչալի,  
Ախտայոյգ ձայնը չընադ թամարի.  
Եւ կա՛ր այդ ձայնում մի թովչանի բնենյէ,  
Կա՛ր եւ անմեկին, յաղթական մի ոյժ:

Անտես փերիի ձայնին ունկնդիր՝  
Հովիւ, սովորաւ, մարտիկ զրհակիր—  
Դիմում էր դրդեակ—եւ ժանս ներփինին  
Դուռն էր բաց անում հիւրի առաջին։

Փետրալից մահնում, բաղուած մետախում,  
Այնուեղ Թամարն էր հիւրին սպասում,  
Վերան ակ, գոհար—եւ զինով լրցուած  
Երկո հաս գաւար առջեւը դրցուած:

Եւ փարում էին ձեռքեր չերմազին,  
Հպում վառվուն ըրունի ըրունինին.  
Եւ ախտաբորբոք, վայրախինդ ձայներ  
Դադա՛ր չունեին այնուեղ ողջ գիշեր:

Ասես, դրդեակում այն լուռ, ամայի  
Հարդիւրով վառսիրս աղջիկ, պատաճի  
Եկած լինեին հարասնեաց հանդէս,  
Կամ հարուս բաղման կատարում մի ժէս.

Բայց հէնց որ լոյսը վաղ առաւօսեան  
Սփռում էր ըողեր լեռների վերան,  
Մութ եւ լոռութիւն պատում էր կրրկին.  
Մի ակընթարթում մըռայլ դրդեակին:

Միայն Թերէն էր Դարեալի խորեում  
Անդորրութիւնը խռովում, աղմըկում.  
Ալիքի յետից ալիքն էր վազում,  
Ալիքն ալիքին հասնել էր ուզում:

Եւ տանում էին իրանց հետ արագ  
Նոխ ողբարով անմըռունչ դիակ.  
Եւ մէկն այդ ժամին ներմակին տարով՝  
Չայնում էր հեռուից. «ա'խ, մընա՛ս բարով»,

Եւ ժամն անշատման աշխան էր քընքոյց,  
Եւ ձայնն էր հընչում աշխան մեղմ-անոյց,  
Որ կարծես կրրկին խոստանում լիներ  
Նոր տեսակցութեան հիացմունի ու սէր...